ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ << ՆՈՐԱՇԵՆԻ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎ. ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ-Ի 2023-24 ՈւՍՏԱՐՎԱ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈւԹՅԱՆ

# ՊԼԱՆ

**ՎԵՐԱՀՍԿՈՂ**՝ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈւՐԴ
**ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈւԹՅՈւՆԸ**՝ ՏԱՐԵԿԱՆ ԱՌՆՎԱԶՆ ԵՐԿՈւ ԱՆԳԱՄ
**ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ**՝ ՔՆՆԱՐԿՈւՄ - ԳՆԱՀԱՏՈւՄ
**ՑՈւՑԻՉ**՝ ԴԶԾ , ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ /ՏԱՊ/, ՆԳ

| ԳՈՐԾՈՂՈւԹՅՈւՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈւՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈւ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈւՅՑ | ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ, ՑՈւՑԻՉ /ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ/ |
|---|---|---|---|
| 1) Ապահովել զարգացման ծրագրի իրականացումը հաստատության տնօրենի առաջնորդությամբ, խթանել սովորողների ակադեմիական առաջընթացն ու կրթության որակի բարելավումը՝ ուսուցման և ուսումնառության ընդհանուր պատկերացումների, դրանց զարգացման, քննարկման, իրականացման և գնահատման արդյունքում. | տնօրեն | յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, Մ/Խ, Մ/Մ, Ծ/Խ, Ա/Խ արձանագրություններ, կատարողականներ |
| 2) Ամեն տարի կազմել հաստատության ուսումնական պլանը հաստատությունում գործող կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածությամբ՝ որպես մասնակցային գործընթաց՝ հիմնված լինելով հանրակրթության պետական չափորոշչի, համայնքի, բնակավայրի կամ հաստատության գործունեության նպատակների վրա | տնօրեն | սեպտեմբերի 1 | ՈւԴԱՊ, տարիֆիկացիա, արձանագրություններ |
| 3) Հաստատությունում ուսումնական տարվա ընթացքում և դրա ավարտին պարբերաբար իրականացնել սովորողների առաջադիմության տվյալների, անցկացվող ընթացիկ, ամփոփիչ և արտաքին գնահատումների, կիրառվող մանկավարժական մեթոդների ու մոտեցումների վերլուծություն՝ դրանց արդյունքում բարելավվելով առաջադիմության ցուցանիշները՝ ամեն տարի ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համամասնության կրճատման և սովորողների առաջադիմության միջին ցուցանիշների բարելավման միջոցով, ինչպես նաև ըստ անհրաժեշտության վերանայելով մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները | տնօրեն | յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, հաշվարկ, ամփոփում, հայտորոշիչ թեստ թեմատիկ, կիսամյակային, գործնական աշխ., հարցաթերթ, թեմատիկ և օրվա դասի պլան |
| 4) Ապահովել ուսուցիչների հասանելիությունը անհրաժեշտ ռեսուրսներին (մարդկային, ժամանակային, նյութատեխնիկական)՝ մանկավարժական ընտրված մեթոդների և մոտեցումների կիրառությունն ապահովելու համար. | տնօրենությ. | յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, հաշվետվություն |
| 5) Գործարկման մեջ դնել ներդպրոցական վերահսկողության արդյունավետ համակարգ՝ ուսումնական տարվա ընթացքում ուսումնառության և ուսուցման գործընթացում առկա խնդիրների բացահայտման և դրանց կարգավորման համար։ | տնօրենությ. | յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, դասալսումներ |
| 6. Հաստատությունում ապահովել մանկավարժական ինքնավարության, ակադեմիական ազատության, դրական և ապահով մթնոլորտ բոլոր շահակիցների համար.<br>1) հաստատությունում ուսումնական գործընթացն իրականացնել հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների, մանկավարժների, սովորողների և ծնողների փոխադարձ վստահության պայմաններում | տնօրեն | յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, արձանագրություններ |
| 2) Հաստատությունում որոշումները կայացնել համագործակցության արդյունքում, առանձին իրավիճակների կամ խնդիրների քննարկման ժամանակ ապահովելով բոլոր կողմերի մասնակցությունն ու նրանց դիրքորոշումների ներկայացումը | տնօրեն | յուրաքանչյուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, առաջարկություններ, արձանագրություններ |
| 3) Նախագծային և այլ աշխատանքների իրականացման ժամանակ իրականացնել համայնքային կարիքների | տնօրեն | յուրաքանչյուր | մշտադիտարկում, նախագծային |

| | | | |
|---|---|---|---|
| ուսումնասիրություն և վերլուծություն, և դրանք հաշվի առնել աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ. | | ուստարվա ընթացքում | աշխատանքների վերլուծություն |
| 7. Աշխատակազմի կառավարում և մասնագիտական զարգացում. մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացվում է արդարացի և բարեխիղճ եղանակով, գործում է նրանց աջակցության և զարգացման համակարգ.<br>1) Մանկավարժական աշխատողների թափուր տեղերի համալրումն իրականացնել սահմանված ընթացակարգերի համաձայն՝ ապահովելով գործընթացների թափանցիկությունն ու արդարությունը. | տնօրեն | յուրաքանչ յուր ուստարվա ընթացքում | աշխատանքի թափանցիկության ապահովում, մշտադիտարկում, գրանցամատյան, արձանագրություն |
| 2) Մանկավարժական աշխատողի թափուր տեղի մրցույթի արդյունքում դրա չհամալրման պարագայում արդյունավետ կիրառել օրենսդրության շրջանակներում նախատեսված գործիքակազմերը՝ առարկայի ուսուցման շարունակականությունն ապահովելու նպատակով. | տնօրե նություն | յուրաքանչ յուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, ուսուցիչների փոխարինման մատյան |
| 3) Դասաբաշխումներն իրականացվում են կրթության որակի բարելավման և արդյունավետության բարձրացման սկզբունքներից ելնելով, դրանց կազմման սկզբունքները թափանցիկ են և ընկալելի գործընթացի բոլոր մասնակիցների համար. | տնօրե նություն | յուրաքանչ յուր ուստարվա ընթացքում | բաց քննարկումներ, նախնական դասաբաշխում |
| 4) Խրախուսել մանկավարժական աշխատողներին մասնագիտական զարգացման տարաբնույթ ծրագրերի մասնակցության համար, հաստատությունում ամեն տարի մասնագիտական զարգացման ծրագրերին մասնակցող և դրա արդյունքում վարձատրության բարձրացում գրանցող աշխատակիցների թիվն ամեն տարի աճեցնել: | տնօրե նություն | յուրաքանչ յուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, խրախուսանք, պատվոգիր |
| 5) Հաստատությունում պարբերաբար իրականացնել դասալսումներ տնօրենի և փոխտնօրենի կողմից, դրանց արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ, մանկավարժներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական աջակցություն. | տնօրե նություն, ուսուցիչներ | յուրաքանչ յուր ուստարվա ընթացքում | դասալսումներ, դասալսման մատյան, արձանագրություն ներ |
| 6) Իրականացնել մանկավարժների վերապատրաստման ծրագրերի որակի մշտադիտարկում և հետադարձ կապի ապահովվում՝ դրանց արդյունքում մանկավարժների կողմից ուսուցման գործընթացում նոր հմտությունների, մեթոդների կիրառությունն ապահովելու համար: | տնօրեն | | մշտադիտարկում հարցաթերթ |
| 9. Հաղորդակցություն և համայնքի հետ հարաբերություններ. կրթության որակի և սովորողների առաջադիմությունը խրախուսելու նպատակով  ապահովել արդյունավետ հաղորդակցություն ուսումնական գործընթացի շահակիցների հետ և ներգրավել համայնքին.<br>1) Ծնողներին ժամանակին իրազեկել ուսումնական գործընթացի մասին, ապահովել իրենց դիտարկումներն ու առաջարկների ներկայացումը կառավարման գործընթացին | տնօրե նություն, դասղեկ ներ | յուրաքանչ յուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, ծանուցումներ, պլաններ հայտարարություն ներ |
| 2) Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններում քննարկել հանրակրթության ոլորտին վերաբերող օրենսդրական առաջարկներն ու նախագծերը, առկայության դեպքում ներկայացնել առաջարկներ և դիտարկումներ դրանց վերաբերյալ՝ ոլորտի կառավարման համապատասխան մարմիններին. | մարմին ների անդամ ներ | յուրաքանչ յուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, արձանա գրություններ |
| 3) Նախագծային և այլ աշխատանքների իրականացման ժամանակ իրականացնել համայնքային կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն, և դրանք հաշվի  առնել աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ. | տնօրենությո ւն, մանկա վարժներ | յուրաքանչ յուր ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, վերլուծության հաշվետվություն |
| 4) Հաստատության զարգացման նպատակով հաշվի առնել համայնքի կարիքներն ու ներուժը, առաջարկել նոր ծրագրեր և մոտեցումներ. | մանկա վարժներ | յուրաքանչ. ուստարվա ընթացքում | մշտադիտարկում, վերլուծության հաշվետվություն |
| 5) Ապահովել արդյունավետ համագործակցություն և կապ | տնօրեն | Յուրաքանչ. | մշտադիտարկում, |

| | | | |
|---|---|---|---|
| ոլորտի մարմինների, ուսուցչական կազմակերպությունների և արհեստագործական միությունների, այլ շահագրգիռ կողմերի հետ: | | ուստարվա ընթացքում | պայմանագրեր, ծրագրեր,պլաններ |